ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՐԳԱՍԱԲԵՐ ՈՒՂԻՆ

Լրացավ անվանի պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Սուրենի Սվազյանի ծննդյան 75-ամյակը:

Հ. Սվազյանը ծնվել է 1938 թ. հունվարի 8-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): Ավարտել է տեղի Վլ. Մայակովսկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցը (1955 թ.): 1958 թ. զորակոչվել է խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո՝ 1961 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Ուսումն ավարտելով՝ 1966 թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ հուշարձանների պահպանության վարչությունում, իսկ 1967 թ.՝ Հեղափոխության պատմության թանգարանում՝ որպես ավագ գիտաշխատող:

1968-1971 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ՝ ակադ. Ս. Երեմյանի գիտական ղեկավարությամբ: Ասպիրանտուրան ավարտելուց հետո Հ. Սվազյանն անմիջապես աշխատանքի է անցնում նույն ինստիտուտում նախ որպես լաբորանտ, ապա գիտաշխատող, ավագ գիտաշխատող, հետագայում՝ առաջատար գիտաշխատող:

Հ. Սվազյանին 1975 թ. շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան «Աղվանքը VII-VIII դդ.» վերնագրով ատենախոսության համար: 1991 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Աղվանից աշխարհի պատմությունը հնագույն շրջանից VI դարը ներառյալ» թեմայով: 2003 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1980-1987 թթ. վարել է ՀԽՍՀ ԳԱ միացյալ արհկոմի նախագահի պաշտոնը:

Հ. Սվազյանը 1994-2003 թթ. ծառայել է Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում՝ գլխավորելով «Դաստիարակչական աշխատանքների» ու «Հասարակագիտական առարկաների» ամբիոնները՝ դառնալով դրանց հիմնադիր պետը: Ունի ՀՀ բանակի գնդապետի զինվորական աստիճան: Կանգնած լինելով բանակաշինության ակունքներում՝ գնդապետ Հ. Սվազյանը նաև իր ներդրումն ունի հայոց բանակի կայացման գործում:

Դեռևս ուսանողական տարիներին է դրսևորվել Հ. Սվազյանի գիտական աշխատանքներ կատարելու ունակությունը: Ուսումնառության շրջանում նա

մասնակցել և զեկուցումներով հանդես է եկել համամիութենական ուսանողական հնագիտական 11-րդ (1965 թ.) և 12-րդ (1966 թ.) գիտաժողովներին՝ արժանանալով պատվոգրերի:

Ազգային զարթոնքի տարում՝ 1965 թ., Երևանի պետական համալսարանի 4-րդ կուրսի ուսանող Հ. Սվազյանը շարժման ակտիվ մասնակիցներից էր, որն էլ հետագայում կանխորոշեց նաև նրա գիտական ուղին: Լեռնային Ղարաբաղի (Արցախի) պատմության նկատմամբ հետաքրքրությունը գիտության մեջ նոր ոտք դրած երիտասարդին տարավ Աղվանից աշխարհի պատմության անդաստանը: Դա ամբողջատիրության պայմաններում նաև քաղաքացիական արիության դրսևորում էր, քանի որ այդ բնագավառում կաղապարված գաղափարներից դուրս ամեն մի այլ մոտեցում դիտվում էր իբրև ազգայնամոլություն և հղի էր անկանխատեսելի հետևանքներով:

Գիտահետազոտական կարողություններն ու աղբյուրագիտական խոր գիտելիքներն ապահովել են նրա գիտական հետաքրքրությունների լայն շրջանակը: Հ. Սվազյանը հիմնականում զբաղվում է Աղվանքի պատմության ուսումնասիրությամբ: Նրա գիտական սկզբնական շրջանի գործունեությունը վերաբերում է Աղվանից աշխարհի պատմության մինչ այդ անհայտ կամ քիչ հետազոտված հարցերի ուսումնասիրությանը: Այդ առումով անուրանալի են Հ. Սվազյանի ծառայությունները «Աղվանից աշխարհ» հասկացության, Հայոց Արևելից կողմանց իշխաններ Ջուանշիրի և Վարազ-Տրդատի իշխանության տարեթվերի ճշգրտման, Աղվանքում Արշակունյաց թագավորության հիմնադրման, ինչպես նաև մարզպանության կազմավորման թվականի ճշգրտման, նոր շեշտադրումներով և խորքային վերլուծություններով ուսումնասիրման գործում (Հ. Սվազյանի վերջին տեսակետն ընդունեց ակադ. Ս. Երեմյանը, և այն տեղ գտավ Հայ ժողովրդի պատմության 2-րդ հատորում):

Հ. Սվազյանը 1980-1990-ական թթ. լույս ընծայած հոդվածներում հիմնականում մերժել է պատմության ադրբեջանցի կեղծարարների հակագիտական ու հակահայկական տեսակետներն ու նրանց միտումը՝ պատմությունը հարմարեցնել իրենց նեղ ազգայնական նպատակներին և Բուն Աղվանքի սահմանները նույնացնել այժմյան Ադրբեջանի Հանրապետության սահմաններին՝ աղվանացիներին համարելով իրենց նախնիները:

Հետագա տարիներին Հ. Սվազյանի գիտական հետաքրքրությունների կիզակետում են եղել Աղվանքի պատմության այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են այստեղ ավատատիրական հարաբերությունների ձևավորումն ու քրիստոնեության ներթափանցումը և հռչակումը՝ որպես պետական պաշտոնական կրոն: Նա աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությամբ եկել է այն եզրահանգման, որ ավատատիրական հարաբերություններն Աղվանքում ձևավորվել են քրիստոնեության թափանցման հետ միաժամանակ: Ըստ վաստակաշատ գիտնականի՝ քրիստոնեությունն Աղվանք է ներթափանցել դեռևս մ.թ. II դարի սկզբներին և պետական կրոն հռչակվել IV դ. 70-ական թվականների կեսերին՝ Ուռնայր արքայի կողմից, երբ վերջինս մեծ շքախմբով մեկնում է Հայաստան, մկրտվում, ծանոթանում քրիստոնեության խորհուրդներին և վերադառնալով Աղվանք՝ նոր վարդապետությունը հռչակում պետական պաշտոնական կրոն:

2006 թ. լույս տեսավ Հ. Սվազյանի «Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ)» աշխատությունը: Դրանում առաջին անգամ հայ իրականության մեջ Աղվանքի պատմությունը տրված է բավական ընդգրկուն՝ քաղաքական, վարչատարածքային, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային առումներով: Հ. Սվազյանը նախ անդրադարձել է «Ալբանիա» «Աղուանք», «Առան»

անվանումների քննությանը, ցույց տվել, որ «Աղուանք» եզրույթի հիմքում ընկած է հայերեն «աղու» բառը, որը նշանակում է բարենպաստ բնակլիմայական պայմաններ ունեցող երկիր: Բացահայտել է նշված տեղանունների իմաստային փոփոխությունները, ցույց տալով, որ այդ տեղանունները էթնիկական ծագում չունեն, հետազոտողը բացահայտել է նաև դրանց իմաստային փոփոխությունները՝ ըստ պատմականորեն առաջացած վարչական-քաղաքական միավորների: Հիմնվելով սկզբնաղբյուրների վրա՝ Հ. Սվազյանն Աղվանքի հարավային սահման է ճանաչում Կուր գետը: Նա քննարկել է նաև աղվանական պետության կազմավորման, հարևանների հետ փոխհարաբերությունների, պարսկական տիրապետության դեմ ազատագրական շարժումների հարցերը: Հ. Սվազյանն անդրադարձել է նաև էթնիկական խնդիրների և գտել, որ երկրի բազմացեղայնության պայմաններում, երբ չկա անվանապես առանձնացված ցեղ կամ ցեղային միություն, ճիշտ կլինի բոլորին մեկ ընդհանուր ձևով կոչել «աղվանացիներ»՝՝ իբրև Աղվանից աշխարհի բնակիչներ: Աշխատությունն իր բնույթով հիմնարար ուսումնասիրություն է, ուստի պատահական չէ, որ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը Մեսրոպ արք. Աշճյան մատենաշարով լույս ընծայեց նաև այդ աշխատության ռուսերեն տարբերակը:

Հ. Սվազյանը հեղինակել է 80-ից ավելի գիտական հոդվածներ: Նա երկու դպրոցական ուսումնական ձեռնարկների՝ «Հայաստանի հարակից երկրների պատմություն» (1992 թ.) և «Հայոց պատմություն, 5-6» (1996 թ.) դասագրքերի համահեղինակ է:

Հ. Սվազյանը զեկուցումներով հանդես է եկել միջազգային և տեղական գիտաժողովներում, ղեկավարել ասպիրանտների, ընդդիմախոսել թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ, հրատարակության երաշխավորել մի շարք աշխատություններ:

Իր բեղուն գործունեության համար Հ. Սվազյանը պարգևատրվել է բազմաթիվ պատվոգրերով ու շնորհակալագրերով, երկար տարիներ եղել Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:

Ծննդյան 75-ամյակի առթիվ վաստակաշատ պատմաբանին, մեծարգո պրոֆեսորին վերստին մաղթում ենք քաջառողջություն, արևշատություն և նոր նվաճումներ աղվանագիտության բնագավառում:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Ա. Ի.
Պատմական գիտությունների թեկնածու
ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա. Մ.
Պատմական գիտությ ունների թեկնածու